

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

**ՀՈՒՋԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(անգլերեն նյութի հիման վրա)**

Ժ. 02.07. - “Գերմանական լեզուներ” մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոց. Ռ. Ս. Առաքելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Դ., դոց. Ն. Լ. Հարությունյան
Բ.Գ.Թ. Տ. Բ. Միքայելյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի «Գլաձոր» համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մայիսի 6-ին ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈՂ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):


Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2015թ. ապրիլի 3-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

Բ. Գ. Դ., պրոֆեսոր՝



Ե. Լ. Երզնկյան

Վերջին մի քանի տասնամյակներն ընդգրկող ժամանակաշրջանը նշանավորվում է բազմաթիվ հայտնագործություններով և տեխնիկական մեծագույն նվաճումներով գիտության բոլոր ոլորտներում, սակայն դրանցից ամենանշանավորը, թերևս, տեխնոլոգիական միջոցների բուռն աճն է, որն այսօր տարաբնույթ հետազոտությունների առարկա է դարձել: Համացանցային շփումը հույզերի արտահայտման մի յուրօրինակ միջոց է, որը հաստատուն քայլերով ներթափանցում է մարդկային գործունեության տարբեր ոլորտներ՝ մարդկանց՝ միմյանց հետ շփվելու հնարավորություն ընձեռելով՝ անկախ տարածական և ժամանակային խնդիրներից: Հաղորդակցության արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև այդ գործընթացում ընդգրկված հաղորդակցվողների արտահայտած զգացմունքներն ու հույզերը, որոնց լեզվական դրսևորումներն արժանի են հատուկ ուշադրության, քանի որ հաղորդակցության գրեթե բոլոր տեսակները ենթադրում են որևէ հուզական տարրի առկայություն:

Սույն ատենախոսության ուսումնասիրության **առարկան** համացանցային հաղորդակցության մեջ կիրառվող հուզարտահայտչական միավորներն են, որոնք քննության են առնվում հոգելեզվաբանական, գործաբանական և լեզվամշակութային հայեցակերպերի հաշվառմամբ:

Ատենախոսության **նպատակը** համացանցային դիսկուրսի՝ որպես հաղորդակցական երևույթի և սոցիալական համատեքստով բնորոշվող գրավոր հաղորդման, ինչպես նաև համացանցային հաղորդակցության ընթացքում հուզարտահայտչական միավորների կիրառման հնարավորությունների և առանձնահատկությունների ուսումնասիրությունն է:

Համացանցային հաղորդակցության մեջ ավարտուն խոսքային հաղորդումները ներկայանում են տարատեսակ միջոցների՝ գերտեքստի, էլեկտրոնային օրագրերի, վիրտուալ անձի բազմակիության կիրառմամբ: Հաղորդակցության ընթացքում դրանք հնարավորություն են տալիս վիրտուալ իրականությունը դիտարկելու որպես անձի ինքնարտահայտման և ինքնադրսևորման մի նոր երևույթ, որը հանգեցնում է մշակութային նոր վարքագծի ձևավորմանը:

Սույն աշխատանքում փորձ է արվում ուսումնասիրելու այնպիսի երևույթներ, որոնց շնորհիվ ձևավորվում է հաղորդակցական ներուժը: Դրանց թվում է հուզականության կարգի դրսևորման առանձնահատկությունների քննությունը համացանցային հաղորդակցության մեջ:

Նշված նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. պարզաբանել հաղորդակցության և, մասնավորապես, համացանցային հաղորդակցության բնույթը, տիպերն ու գործառույթները,

2. հստակեցնել հուզական մտածողության գործառույթները և հույզերի դերը խոսքին թացում,
3. ուսումնասիրել հուզարտահայտչականության միավորների կիրառման առանձնահատկությունները անգլերեն համացանցային դիսկուրսում,
4. դիտարկել հույզերի արտալեզվական, մասնավորապես, գրաֆիկական միջոցների դերն ու նշանակությունը համացանցային հաղորդակցության գործընթացում,
5. ուսումնասիրել համացանցային հաղորդակցության ընթացքում հուզարտահայտչական միավորների գործածման առանձնահատկությունները խոսքային հուզարտահայտչական ակտերի քննությամբ,
6. որոշարկել հուզարտահայտչական միավորները՝ հաշվի առնելով դրանց կիրառողների ազգամշակութային, գենդերային և տարիքային գործոնները:

Նշված խնդիրներից վերջինը հատուկ ուշադրության է արժանի, քանի որ հույզերի արտահայտման միջոցներն ու հաճախականությունը պայմանավորված են ո՛չ միայն հաղորդակցվողների տարիքային, այլև, անշուշտ, ազգամշակութային և գենդերային պատկանելությամբ:

Սույն աշխատանքում հաղորդակցական լեզվաբանության դիրքերից քննության է ենթարկվում բառի յուրօրինակ բաղադրիչը՝ արտահայտչականությունը, որը բառի մեջ հուզականության արտահայտման արդյունքն է: Հույզերը ո՛չ միայն պայմանավորված են գործունեությամբ, այլև հենց իրենք են պայմանավորում գործունեությունը և կարող են վերարտադրվել գիտակցության մեջ՝ դառնալով մտածողության անբաժան մաս:

Տեղեկատվության արագ զարգացման և տարածման ներկա պայմաններում ավելի ու ավելի այժմեական են դառնում համացանցային հաղորդակցությունը և դրան վերաբերող տարաբնույթ ուսումնասիրությունները:

Ատենախոսության **արդիականությունը** պայմանավորված է տեխնոլոգիական բազմազան միջոցներով իրականացվող հաղորդակցության և, մասնավորապես, համացանցային հաղորդակցության այժմեականությամբ և աստիճանաբար ավելի ընդլայնվող կիրառմամբ, ինչպես նաև դրանում հուզարտահայտչական տարաբնույթ միավորների գործածությամբ: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ համացանցային հաղորդակցության մեջ անմիջականորեն դրսևորվում են հանրության հոգեբանության և գիտակցության մեջ, ինչպես նաև լեզվում կատարվող փոփոխությունները:

Աշխատանքի **նորույթը**, համացանցային դիսկուրսի տարբեր տեսակներում՝ անգլերեն վիրտուալ երկխոսություններում, քննարկումներում և առցանց հաղորդակցության այլ ձևերում հուզարտահայտչական միավորների

կիրառման առանձնահատկությունների բազմակողմանի քննությունն է թե՛ լեզվի տարբեր մակարդակներում և թե՛ հուզարտահայտչական ակտերում:

Ատենախոսության **տեսական արժեքն** այն է, որ այն կարող է որոշակի ներդրում ունենալ հուզարտահայտչական և հուզագնահատողական միավորների քննության միջոցով հոգելեզվաբանության, ճանաչողության, հաղորդակցության և գործաբանության ոլորտներում մի շարք խնդիրների պարզաբանման համար: Այս առումով կարևոր է նշել, որ հիմնվելով հույզերի մասին տեսությունների վրա, աշխատանքում փորձ է արվում անզլերեն հուզարտահայտչական միավորներն ուսումնասիրել համացանցային հաղորդակցության շրջանակներում՝ նպատակ ունենալով դիտարկել համացանցային գերտեքստի միջոցով միմյանց հետ հաղորդակցվողների տիպերը և հաղորդակցության գործընթացում հուզագնահատողական բաների յուրահատուկ գործածությունները:

Աշխատանքի **գործնական արժեքը** պայմանավորված է համացանցային հաղորդակցման ուսումնասիրության մեջ առաջ քաշված մոտեցումներով և դրանց հիման վրա ստացված արդյունքներով, որոնք կարող են կիրառվել ինչպես էլեկտրոնային գերտեքստերի մյուս ձևերի (օրինակ՝ հեռախոսախոսողաժողովների, խմբային քննարկումների և այլն), այնպես էլ անհատի խոսքի առանձնահատկությունները վեր հանող և լեզվական տարբեր հայեցակետերով կատարվող ուսումնասիրություններում:

Ինչ վերաբերում է ուսումնասիրության **նյութի**՝ հուզարտահայտչական միավորների ընտրությանը, ապա, նշենք, որ այն պայմանավորված է հաղորդակցության հարցերին անդրադառնալու հանգամանքով, քանի որ հույզերն օբյեկտիվ իրականության ընկալման և արտացոլման ձևերից են և ըստ դրանց հոգեբանական տեսության՝ խոսքային յուրաքանչյուր գործունեություն ունի հուզական բնույթ: Ուսումնասիրության նպատակն իրագործելու համար ընտրվել են համացանցային դիսկուրսի հատվածներ, տարբեր կայքերում տեղադրված երկխոսություններ, նամակներ և այլն (ավելի քան 1000 նմուշ): Այսպիսով, հետազոտության **փաստական նյութը** համացանցային շփման երկխոսական միավորներն են, որոնք առանձնացվել են ազգամշակութային, գենդերային և տարիքային գործոնների հաշվառմամբ:

Ատենախոսության **մեթոդաբանական հիմքը** փաստական նյութի վերլուծությունն է լեզվագործաբանական մեթոդի կիրառմամբ: Գործադրվել են նաև համատարած ընտրության, մեկնողական, լեզվաճանաչողական, հոգելեզվաբանական, վիճակագրական մեթոդները: Աշխատանքի **տեսական հիմքը** հայրենական և արտասահմանյան հեղինակների՝ Դ. Քրիսթի, Ս. Հերինգի, Ա. Վեժբիցկայի, Ջ. Սըրլի, Ջ. Օսթինի, Ջ. Լիչի, Վ. Կարասիկի, Գ. Պոչեպցովի, Ֆ. Շարկովի, Ս. Տեր-Մինասովայի, Ե. Մյախկովայի, Մ. Կա-

գանի ուսումնասիրություններն են, ինչպես նաև Վ. Շախովսկու հույզերի կարգայնացման մասին տեսությունը:

Աշխատանքի կառուցվածքը. ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից իրենց համապատասխան ենթագլուխներով ու ծանոթագրություններով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից (126 անուն, այդ թվում համացանցային կայքեր) և հավելվածից:

Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության թեման և հիմնահարցերը, նպատակն ու խնդիրները. հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու ատենախոսության գիտական նորույթը, ինչպես նաև դրա տեսական ու գործնական արժեքները:

Առաջին գլուխը («Հաղորդակցությունը որպես տեղեկատվության փոխանցման միջոց և դրա հիմնական տեսակները») բաղկացած է երկու ենթագլխից: Այս գլխում պարզաբանվում են հաղորդակցության բնույթը, տիպերն ու գործառույթները:

Առաջին գլխի առաջին ենթագլուխը («Հաղորդակցության ընդհանուր բնույթը և տիպերը») նվիրված է *հաղորդակցության բնույթի և տիպերի քնննարկմանը*: Այստեղ ներկայացվում են հաղորդակցության հիմնական գործառույթները, ձևերն ու միջոցները, հաղորդակցության հոգեբանական առանձնահատկությունները:

Հաղորդակցությունը տեղեկատվության փոխանակման յուրօրինակ տեսակ է, որն իրականանում է գրավոր և բանավոր ձևերով, ինչպես նաև մարմնի շարժումների և խոսքային գործոնների միջոցով: Աշխատանքի շրջանակներում վերլուծության են ենթարկվում տեքստ/դիսկուրս հասկացությունները, որի արդյունքում պարզ է դառնում, որ տեքստը հաղորդակցության միջոցն ու միավորն է, իսկ դիսկուրսը՝ այն ձևը, ըստ որի ընթանում է հաղորդակցությունը: Արտահայտված հույզի մասին եզրակացություն անելու համար, անհրաժեշտ է այն ուսումնասիրել կոնկրետ խոսքային իրադրության մեջ: Այս է պատճառը, որ բոլոր հույզերը դիսկուրսիվ բնույթ են կրում: Հենց այս դիրքերից էլ աշխատանքում դիտարկվում են դիսկուրսային հուզական մտածողության խնդիրները:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում («Համացանցային հաղորդակցության հիմնական գործառույթները») քննության են առնվում համացանցային հաղորդակցության գործառույթները, վեր են հանվում իրական և վիրտուալ (տվյալ դեպքում համացանցային) հաղորդակցության տարբերությունները: Վիրտուալ հաղորդակցությունը վիրտուալ իրականության ձևավորման կարևոր մասը լինելով՝ բավականին բարդ ու բազմաշերտ երևույթ է: Համաշխարհային համացանցում այն միջմշակութային հաղորդակցական

հմտությունների և կարողությունների ձևավորման նորագույն և տեխնիկա-
պես ամենաարդյունավետ ու հազեցած միջոցներից է:

Համացանցային շփման ընթացքում առանձնակի ուշադրության է
արժանանում գրաֆիկական պատկերների կիրառումը: Այս դեպքում տեղե-
կությունը փոխանցվում է ո՛չ միայն տեքստերի ձևով, այլ նաև զանազան
ոճավորված նկարների և ոչ խոսքային այլ ձևերի՝ գլխատառերի կամ շեղա-
տառերի, տառերի կրկնապատկման, չափերտների, աստղանիշի, տրոհագծի
և այլ միջոցների կիրառմամբ: Օրինակ՝

✓ *View over the Mondego river from the University - and me ... On top of the
tower – I can't believe I crumbled up there, on all fours, because the door out
was a meter by meter wide, and the ladder was almost vertical...*

(www.facebook.com)

✓ **ONLY IN EUROPE YOU WOULD FIND BEER IN VENDING MACHINES!**

(www.chaticq.com)

✓ *Haha, I swear it's always the same people that comment on whatever I post.*

- **Yes, the same *****

(www.chaticq.com)

✓ *You never know what this does to the real fans of her. Thanks for keeping her
"ALIVE".*

(www.twitter.com)

Առանձնահատուկ ուշադրության են արժանանում նաև հուզանշանները,
բացականչական նշանները, որոնց միջոցով արտահայտվում են հրահանգ-
ներ, բացականչություններ, գայրույթ կամ վրդովմունք: Օրինակ՝

✓ **OMG! One of the best groups of all times! So sorry they lost Freddie (the world
lost him). I saw him do a concert with Queen. He's different than Freddie, but
he's the best substitute I've heard. GO QUEEN AND GO ADAM!**

(www.facebook.com)

Այս և բազմաթիվ այլ օրինակների վերլուծությունից հետևում է, որ հա-
մացանցային դիսկուրսը որպես շփման տեսակ բնորոշելիս կարելի է նշել,
որ դրանում էլեկտրոնային ազդանշանը շփման նույն ավանդական գրավոր
ձևն է, միայն թե շփման միջոցը ո՛չ թե թուլթոն է, այլ էլեկտրոնային կապը:

Համացանցային հաղորդակցությունը, փաստորեն, ձեռք է բերում այն-
պիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են վիրտուալությունը, համ-
ընդհանրությունը (այսինքն՝ ցանցում յուրաքանչյուր օգտատիրոջ հետ
շփվելու հնարավորությունը), գերտեքստայնությունը, այսինքն՝ գրառման
տարբեր ռեժիմներում (օրինակ՝ տեքստային և բազմամիջավայր) տեղե-

կատվության փոխանցման հնարավոր լինելը և այլն¹: Համացանցի հենց այսպիսի զանազանության ու հարստության շնորհիվ է, որ ակնատեսն ենք դառնում մարդկային մեծ ու փոքր խմբերի միջև տարբեր տիպի փոխազդեցությունների, որոնք կարող էին երբեք էլ ի հայտ չգալ բանավոր կամ գրավոր հաղորդակցության ընթացքում: Հետևաբար, կարելի է փաստել, որ այսչափ ուսումնասիրված լինելով հանդերձ՝ հաղորդակցության այս ոլորտը դեռևս լուրջ հետազոտման կարիք ունի, քանզի այն մեր իրականության մեջ արդիական է և ընդգրկում է նորագույն երևույթների հսկա ծավալ:

Ատենախոսության երկրորդ գլուխը («Հույզը որպես միջանձնային շփման կարևոր տարր») բաղկացած է երկու ենթագլխից: Մարդու հուզական համակարգը, լինելով ամենաբարդ համակարգերից մեկը, բազմակողմանի ուսումնասիրություն է պահանջում առավելապես լեզվաբանական առումով: Լեզվում հույզերի արտահայտման խնդրի բարդությամբ ու բազմաբովանդակությամբ է պայմանավորված դրա ուսումնասիրության վերաբերյալ բազմաթիվ մոտեցումների գոյությունը: Սույն աշխատանքում դիտարկվում են որոշ գիտական մոտեցումներ, որոնց հիմքի վրա էլ հնարավոր է դառնում հույզերի համապարփակ ուսումնասիրությունը:

Անդրադառնալով հույզերի նկարագրման հարցին՝ ատենախոսության երկրորդ գլխի առաջին ենթագլխում («*Հույզ* հասկացությունը որպես գիտական քննության օբյեկտ») քննարկվում են «*հույզ*» և «*հուզականություն*» եզրույթները: Ընդ որում, հույզը դիտարկվում է որպես հոգեբանական կարգ, որը լեզվական մակարդակում վերափոխվում է հուզականության²: Այլ կերպ ասած՝ հուզականությունը հույզն արտահայտելու միջոցն է:

Հույզերի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի դրանց տարատեսակ դրսևորումների դիտարկումը տեքստի սահմաններում և հաղորդակցության համատեքստում: Իրոք, հույզերի բնույթի ուսումնասիրությունը կարևոր է ո՛չ միայն մարդու դիրքերից, այսինքն՝ իր իսկ էությունը գիտակցելու և հասկանալու առումով, այլև, լայն իմաստով, շրջապատող մարդկանց ավելի խորը և հիմնովին հասկանալու համար: Մեր նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես է հուզականությունը դրսևորվում հաղորդակ-

¹ Herring S. Computer Mediated Communication. Linguistic, Social and Cross-Cultural Perspectives. Amsterdam: John Benjamin Publishing House, 1996.

² Шаховский В. Категоризация эмоций в лексико-семантической системе языка. Воронеж: ВГУ, 1987; Мягкова Е. К проблеме исследования эмоциональных единиц индивидуального лексикона. Москва-Курск, 1999 // Web Journal of Formal Computational and Cognitive Linguistics / fcl.ksu.ru/winter.99/cog.../myagkova.pdf

ցության մեջ, ինչպիսին է հույզի հաղորդակցական ներուժը և որոնք են դրա արտահայտման տարատեսակ միջոցները:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում (*Հույզի՝* որպես հոգե-լեզվաբանական կարգի առանձնահատկությունների դրսևորումն անգլերենում») սահմանազատվում են բառի «հուզական նշանակություն» և «հուզական երանգավորում» եզրույթները, ընդ որում՝ առաջինը բառի մեջ հասկացության արտահայտման միջոցն է, իսկ երկրորդը՝ գնահատողականը, այսինքն՝ դրա դրական կամ բացասական բնույթը: Նախ և առաջ, հուզական է առարկայի (օբյեկտի, իրավիճակի) նկատմամբ անմիջական ազդակը, որն արտահայտվում է ձայնարկություններով, զգացական բառերով, կշտամբանք արտահայտող բառերով և այլն (*Wow!!! So wonderful! Oh, Jeez, that's beautiful! Damn you!!!*): Հարկ է նշել, որ հուզական գնահատականը, որպես կանոն, արտահայտչական է լինում:

Աշխատանքի վերջին՝ **երրորդ գլուխը («Հուզարտահայտչական միավորների կիրառման առանձնահատկությունները համացանցային հաղորդակցության մեջ»)** նվիրված է համացանցային դիսկուրսում դրսևորվող հուզարտահայտչական միավորների առանձնահատկությունների քննությանը՝ գեղեցիկին, տարիքային և ազգամշակութային գործոնների հաշվառումով:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում («Հուզարտահայտչական միավորները լեզվի բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում») վերլուծության են ենթարկվում լեզվում գոյություն ունեցող հուզարտահայտչական միավորները, որոնց կիրառմամբ էլ որոշվում է հաղորդակցման բնույթը: Խոսքի արտահայտչականությունն ու դրա դրսևորումների քննությունը լեզվաբանության ոլորտի հիմնական և ամենատարածված խնդիրներից են համարվում, քանի որ հենց դրանց միջոցով են մասնավորապես արտացոլվում հաղորդակցվողների հուզական փոխհարաբերությունները, ահա թե ինչու հարկ ենք համարում տարանջատել «արտահայտչականություն», «հուզականություն» և «գնահատում» հասկացությունները:

Հուզականություն և արտահայտչականություն եզրույթները երբեմն դժվար է տարանջատել, այնուամենայնիվ, հուզականությունը խոսողի՝ իրականության նկատմամբ զգացմունքների ու տրամադրության արտացոլումն է, իսկ արտահայտչականությունն արտացոլում է սուբյեկտի վերաբերմունքը: Վերջինս, բացի արտահայտչականությունից, ենթադրում է նաև գնահատման և հուզականության դրսևորում: Ուստի արտահայտչականությունը երկակի բնույթ ունի՝ լեզվական և խոսքային: Ինչ վերաբերում է «հուզականություն» և «արտահայտչականություն» հասկացությունների փոխհարաբերությանը, ապա պետք է ընդունենք այն փաստը, որ հուզականությունը արտահայտչականության մասն է, այսինքն՝ հուզականը միշտ արտա-

հայտչական է, մինչդեռ արտահայտչականը միշտ չէ, որ հուզական է: Ասվածից հետևում է, որ արտահայտչականությունը միշտ արտահայտում է խոսողի վերաբերմունքը սուբյեկտի կամ իրականության երևույթների նկատմամբ: Ընդ որում, խոսքի արտահայտչականությունը որոշվում է դրա յուրօրինակությամբ, այսինքն՝ ամբողջ տեքստի կամ դրա որևէ մասի առանձնացմամբ՝ ըստ բառային, հնչյունային, քերականական և ոճական միջոցների, ինչը նպաստում է տվյալ տեքստի կամ դիսկուրսի դրական կամ բացասական գնահատմանը ընդունողի/ստացողի կողմից, այսինքն՝ նրա հուզական աշխարհի վրա ներգործում կատարելուն:

Անգլերենում հույզերի արտահայտման լեզվական միջոցներ են ձայնարկությունները, հուզարտահայտչական-գնահատողական ածականները, մակբայները, բայերը, գոյականները և այլն: Օրինակ՝

ս. մակբայներ, որոնք նկարագրում են խոսողի հույզերը.

Happily I don't know what that means, I have to say because of copywrite laws I did take that from a dark looking gentlemen not too long ago.

(www.facebook.com)

բ. բայեր,

That's hot... Love it... now that's what you call very real details of art, this is one of those art pieces that really creeps me out. Thanks for sharing. Love you!

(www.twitter.com)

գ. գոյականներ, որոնք գործածվում են նախդիրներով, ինչպես նաև այն գոյականները, որոնք արտահայտում են հույզերի բնախոսական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ուրախությունը, տխրությունը և այլն.

✓ *Sadness in the world! It's not fair that good people like your sister are taken too soon.*

(www.facebook.com)

✓ *Beauty! I guess its one of those things, beauty is in the eye of beholder. I'd love to have this!*

(www.facebook.com)

դ. ածականներ, որոնց օգնությամբ խոսողն արտահայտում է իր հուզական գնահատականը՝

That is an awful picture. If I caught the father of my child doing this he would never see that child again! DISGUSTING!

(www.facebook.com)

Հույզերի արտահայտման մեկ այլ հետաքրքրական հայեցակերպ են ներկայացնում հարցական նախադասությունները: Հարցական նախադասություններից առավել ուշադրության են արժանի հոետորական հարցերը, որոնք առանձնանում են իրենց վառ հուզական և հուզարտահայտչական

բնությունը, քանի որ դրանք ո՛չ միայն պարզապես մտածողության տրամաբանական ձևն են արտահայտում, այլև՝ փոխանցում են հաղորդակցվողների զգացմունքները՝ յուրովի ներգործելով հաղորդագրությունն ընդունողի/ստացողի վրա: Այսպես՝

✓ *Hit and runs are problem here, too. Unfortunately, it's everywhere. **Is there hope for humanity? Haven't we already hit rock button already? Time to rise up!***

(www.twitter.com)

✓ ***Isn't nature stunning? We're so fortunate to have Mother Earth. Let's look after her!***

(www.facebook.com)

Դիսկուրսի վերոնշյալ հատվածները հռետորական հարցեր են, որոնցում որոշակի հույզեր են արտահայտվում: Առաջին ասույթը ԱՄՆ-ի կոնգրեսի անդամի ուղերձն է ժողովրդին՝ ոստիկանական մեքենայի հետ կատարված դժբախտ դեպքի վերաբերյալ: Պաշտոնյան, կիրառելով հռետորական հարց, ձգտում է նախ հուզական ներգործություն ունենալ գրուցակիցների վրա, ապա՝ իր վերաբերմունքն ու ցավակցությունն արտահայտել ստեղծված իրավիճակի հետ կապված՝ կոչ անելով էլ ավելի զգոն լինել՝ հետագա դժբախտ պատահարներից խուսափելու համար:

Ինչ վերաբերում է երկրորդ ասույթին, ապա այստեղ իրավիճակը քիչ այլ է: Այն պարունակում է կասկածի, զարմանքի և ինչ-որ տեղ նաև ինքնահամոզման առնչանակային իմաստներ և կարող է մեկնաբանվել այլ կերպ (*The nature is stunning and we should look after her*): Փաստորեն, այս հարցական նախադասությունը դիսկուրսի հռետորական իմաստի ցուցիչն է՝ ներկայացված հարցի տեսքով, ինչի շնորհիվ հարցական նախադասությունն անկասկած ստանում է հռետորական հարցի իմաստ, իսկ դրա մեկնաբանումը որպես հռետորական հարց՝ կախված է համատեքստից, որում այն դրսևորվում է: Եվ իրոք, հուզարտահայտչական հռետորական ասույթներն իրականանում են ամենատարբեր հաղորդակցական միջավայրերում, որոնց պերլոկուտիվ ազդեցությունն անհամեմատ ավելի մեծ է, քան սովորական հարցական նախադասությանը:

Ինչ վերաբերում է սաստկացման կամ ուժգնացման կարգին, ապա վերջինիս քննությունը ենթադրում է բազմակողմանի մոտեցում՝ քերականական և բառային կարգերի հաշվառմամբ: Դիտարկենք հետևյալ օրինակները.

✓ *I just had to pick myself up of the floor from laughing at your video... Was he trying to make a run for the bathroom, lol? That was **too funny!***

(www.twitter.com)

- ✓ *Happy New Year my dear, my faithful, my super-puper, my gorgeous, my incredible, my unforgettable and sweet professor. I wish all your dreams come true, giant kisses thanks for being in our lives!*

(www.facebook.com)

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ ասույթներում կիրառված են սաստկական բառեր, որոնք, կցվելով նախադասության որևիցե անդամին, էլ ավելի են ուժգնացնում դրա հուզական իմաստը:

Առավել հետաքրքրության է արժանի հուզարտահայտչական միավորների ուսումնասիրությունը գենդերային և տարիքային գործոնների հաշվառումով: Վերլուծության արդյունքներից պարզվում է, որ տղամարդիկ լեզվական միջոցների օգնությամբ ավելի հաճախ ձգտում են պահպանել իրենց կարգավիճակը, նրանք առավել հաճախ նկարագրում են գործողությունները կամ էլ մղում են գործելու, ինչպես նաև քննարկում կամ տեղեկացնում են փաստեր: Նրանց մեկնաբանությունների մեծ մասը բավականին վճռական և անառարկելի են: Մինչդեռ կանանց հաղորդագրությունները շատ հաճախ ուղղված են թեթևացնելու գրուցախմբում կամ օգտատերերի միջև ծագած լարվածությունը: Հուզական առումով, կանայք աչքի են ընկնում ավելի կայուն խառնվածքով, իսկ նրանց կողմից կատարվող մեկնաբանություններն ու կարծիքներն ավելի զգույշ և կշռադատված են արտահայտվում³:

- ✓ *People actually believe **this shit**? You think this actually happened? Get your head out of the clowns... **this is incredibly stupid**. This is why we are the society of num nutz that we are. Did someone actually ask “is this true?”*(արական)

(www.facebook.com)

- ✓ *To a young and beautiful Mom who is **very happily** emotional today! All the best to your one and only and **so lovely daughter!*** (իգական)

(www.facebook.com)

Տղամարդկանց ուղղված վիրավորական արտահայտությունները (ինվեկտիվները) մոտ յոթ անգամ ավելի հաճախ են հանդիպում, քան կանանց ուղղված ինվեկտիվները: Կանայք և տղամարդիկ, որպես կանոն, իրենց կամ հակառակ սեռի նկատմամբ վիրավորական տարբեր միջոցներ են նախընտրում: Այսպես, օրինակ՝ կանայք նախընտրում են միայնակ կամ հակառակ սեռին կշտամբել՝ *idiot, bastard, coward* բառերով, իսկ տղամարդիկ հաճախ կիրառում են *stupid, pig, fool* բառերը:

³ Горошко Е. Интернет жанр и функционирование языка в интернете // «Жанр» и «культура», сб. научных трудов, N 6. Саратов: «Наука», 2009.

- ✓ *Can't kill yourself to give your child an organ. **Stupid!** (աբալաւն)*
(www.facebook.com)
- ✓ ***OMG, idiots!** It's just a story showing you what a parent is willing to do for his child. It's not a real story, **just a story ... depicting LOVE.** (իզալաւն)*
(www.facebook.com)

Դիսկուրսի վերոհիշյալ հատվածներում արական և իգական սեռի ներկայացուցիչների մեկնաբանությունները հոր և որդու փոխհարաբերությունների մասին են (հայրն իր որդու համար հանդես է գալիս որպես սրտի դոնոր): Վերոգրյալ օրինակներից առաջինը արական սեռի օգտատիրոջ արձագանքն է, իսկ երկրորդը՝ իգական: Ինչպես երևում է, մինևույն թեմայի շուրջ կանանց և տղամարդկանց արձագանքները խիստ տարբերվում են. տղամարդկանց մեկնաբանությունները շատ ավելի կոպիտ են հնչում, քան կանանց մեկնաբանությունները ինչն էլ ևս մեկ անգամ փաստում է կանանց ավելի դյուրագգաց լինելու մասին:

Թե՛ իգական, թե՛ արական սեռի ներկայացուցիչները հավասարապես են մասնակցում հաղորդակցման համաժամանակյա ձևին, ընդ որում կանայք աչքի են ընկնում ավելի բարեհունչ բառերի կիրառմամբ, իսկ տղամարդկանց բնորոշ է ավելի կոպիտ և կտրուկ արտահայտությունների գործածությունը, առավել ևս եթե խոսքն ընթացի էրկու կողմի մասնակիցներն էլ արական սեռի ներկայացուցիչներ են: Կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ կանայք, հանդուրժող լինելով, ավելի պատրաստակամ են ներողություն հայցել, ուրիշներին սատար կանգնել և իրենց գրուցակիցների նկատմամբ ցուցաբերել համագործակցության դիրքորոշում, մինչդեռ արական սեռին երբեմն բնորոշ է հաղորդակցման հակամարտական կամ մրցակցային ոճը: Այս ամենի արդյունքում պարզ է դառնում, որ տղամարդկանց և կանանց խոսքը բավականին տարբեր է և բազմաբնույթ ո՛չ միայն առերես, այլև առցանց շփման ընթացքում, սակայն երկու սեռերի ներկայացուցիչների հաղորդագրությունները հազեցած են հուզականությամբ և արտահայտչականությամբ, թեև դրանք կարող են մեկնաբանվել ամենատարբեր ձևերով:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Չուզարտահայտչականության դրսևորումը խոսքային ակտերում») անդրադարձել ենք խոսքային ակտի քննությանը: Աշխատանքի այս մասում այն դիտարկվում է որպես նպատակաուղղված խոսքային գործունեություն, որը խոսողն իրականացնում է ըստ խոսքային վարքագծի կանոնների և սկզբունքների:

Խոսքային ակտերի որևէ տեսակի և հատկապես արտահայտչական ակտերի դասակարգման վերաբերյալ հակասական կարծիքներ են արտահայտվում: Գիտնականներից ոմանք իրենց դասակարգումներում արտա-

հայտչական խոսքային ակտերը դիտարկում են առանձին, մինչդեռ մյուսները՝ դրանք դասում են որոշակի կարգերի մեջ: Այնուամենայնիվ, խոսքի արտահայտչականությունն ու դրա դրսևորումների քննությունը լեզվաբանության ոլորտի խնդիրներ են, քանի որ հենց դրանց միջոցով են արտացոլվում հաղորդակցվողների հուզական փոխհարաբերությունները⁴:

Կարևոր է նշել նաև, որ արտահայտչական խոսքային ակտերի արդյունավետության նախապայմանը խոսողի մոտ որոշակի հուզավիճակ (կամ հուզական ապրումներ) առաջացնելն է՝ ասույթներ արտաբերելու և դրանց վերաբերյալ դատողություններ անելու միջոցով: Այս իսկ պատճառով արտահայտչական խոսքային ակտը, որի քննությանն անդրադարձել ենք առավել հանգամանորեն, պետք է արտահայտվի հենց խոսողի կողմից և չի կարող վերաբերել դեռևս չիրականացած իրողությանը:

Արտահայտչական խոսքային ակտերը, որոնք հաստուկ ուշադրության են արժանացել սույն աշխատանքում խոսքային վարքի բանաձևեր են: Դրանք երախտագիտության, ներողամտության և նմանատիպ այլ զգացումների պայմանական արտահայտությունն են՝ այնպիսի կոնկրետ իրադրություններում, ինչպիսիք են օրինակ՝ հանդիպումը, հյուրընկալությունը, տոնակատարությունը և այլն: Օրինակ՝

- *So nice to see that great smile of yours!!!*
- *Oh, Brian, so sweet of you, thank you! It is a rare thing these days, but now I am smiling especially for you.*

(www.facebook.com)

Նշված օրինակը լեհ ընկերների երկխոսությունից մի մաս է: Դիսկուրսի այս հատվածը հաճոյախոսության խոսքային ակտի իրագործումն է արական սեռի ներկայացուցչի կողմից, որն իր այս քայլով ձգտում է հակառակ սեռի ներկայացուցչին հաճելի զգացումներ պարգևել՝ նրա հոգեվիճակը փոխելու միտումով:

⁴ Wierzbicka A. Cross-cultural Pragmatics. New-York/ Mouton de Guyter / Berlin, 2008; Verschueren J. Understanding Pragmatics. London / New York: Edward Arnold Publishers, 1999; Austin J. How to do things with words. Oxford: OUP Press, 1962; Wunderlich D. Methodological Remarks on Speech Act Theory and Pragmatics // Texts and Studies in Linguistics and Philosophy, Vol. 10. D. Reidel Publishing Company Dordrecht/ Holland/ Boston/USA/London/England, 1980; Leech G. Principles of Pragmatics. London Group Limited, London, 1983; Серль Дж. Классификация иллокутивных актов // Новое в зарубежной лингвистике, N17. Москва, 1986.

Այսպիսով, համացանցային հաղորդակցությունն իր յուրօրինակ գործառնություններով ևս մեկ ազդեցիկ միջոց է սեփական հույզերը տարատեսակ ձևերով արտահայտելու համար:

Մարդկային կյանքը հագեցած է տարաբնույթ հույզերով և դրանց երանգավորումներով: Մարդկային հույզերը նախ և առաջ իրավիճակների և դրանցով պայմանավորված գործողությունների պատասխան հակազդումներն են, որոնք դրդիչի դեր կատարելով՝ մարդկանց մղում են գործելու: Հույզերի արտահայտման անմիջական միջոցները դրանց լեզվական դրսևորումներն են հաղորդակցական տարբեր իրադրություններում: Հաղորդակցական լեզվաբանությունը, որպես գիտական նոր ուղղություն, ուսումնասիրում է իմաստային տարբեր միավորների հաղորդակցական ներուժը, որի դրսևորումներից մեկն էլ հուզական բաղադրիչն է, առանց որի հնարավոր չէ պատկերացնել հաղորդակցական գործընթացը:

Հույզերի արտահայտման մեկ այլ յուրօրինակ ոլորտ է համացանցային շփումը, որը հաստատուն քայլերով ներթափանցում է մարդկային գործունեության տարբեր ոլորտներ՝ մարդկանց միմյանց հետ շփվելու հնարավորություն ընձեռելով՝ անկախ տարածությունից և ժամանակից: Շփման այս տիպին հատուկ են հաղորդակցման այլ տեսակներին բնորոշ առանձնահատկությունները, ինչպես օրինակ ծավալայնությունը, որը զանգվածային հաղորդակցության նման ենթադրում է շփումն ամբողջ աշխարհի հետ, ներանձնային և խմբային շփումները, որոնք իրականացվում են համակարգչի օգնությամբ: Համացանցի միջոցով հաղորդակցվելիս խոսողն անպայմանորեն իրականացնում է նախախոսքային կողմնորոշում, որը վերաբերում է թե՛ շփման իրադրությանը, թե՛ գրուցակցին: Սեփական դիրքորոշման, գրուցակցի նկատմամբ դերային ակնկալիքների, ինչպես նաև գրուցակցի անհատական առանձնահատկությունների հաշվառման և խոսողի հետ հուզական հարաբերության գիտակցումն իր անմիջական արտացոլումն է ունենում խոսքում:

Տեսական գրականության քննական վերլուծության և համացանցային համաժամ և անհամաժամ հաղորդակցությունների ընթացքում կիրառվող հուզական և հուզարտահայտչական միավորների առանձնահատկությունների ուսումնասիրությունը ճանաչողական լեզվաբանության, գործաբանության և հոգելեզվաբանության դիտանկյուններից բերել է հետևյալ եզրակացություններին:

- Համացանցային հաղորդակցությունը որպես միջանձային շփման կարևոր միջոց առանձնանում է հույզերի արտահայտման իր բազմագործառնությամբ բնույթով: Մակայն առավել աչքի ընկնող առանձնահատկություններից է վիրտուալությունը, այսինքն՝ անորոշ մարդու կամ մարդկանց խմբերի միջև կայացող հաղորդակցությունը, շփման հեռա-

վորությունը, որը ենթադրում է տարածության և ժամանակի գործոնների առկայություն, ինչպես նաև գերտեքստայնությունը, որն իր հերթին հնարավորություն է ընձեռում իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք նպաստում են ստացված տեղեկատվության արագ ընդունմանը, մասնակիցների հասարակական դերերի և դիրքերի հավասարությանը, հույզերի, դիմաշարժումների և զգացմունքների փոխանցմանը տարբեր ժպտանշանների և կետադրական նշանների միջոցով և, վերջապես, յուրահատուկ համացանցային էթիկայի ձևավորմանը:

- Մեր փաստական նյութի քննությամբ ձեռք բերված արդյունքները գալիս են հաստատելու, որ հուզական մտածողությունը բանականության և հույզերի, մտածական գործընթացի և զգացմունքների միջև արտահայտվող սերտ կապն է: Փաստորեն, գիտակցությունը, որն օբյեկտիվ իրականության արտացոլումն է, դրսևորվում է մտածողության, զգացումների և կամային դրդումների ձևով, որը ո՛չ միայն գիտելիք է, այլև այդ գիտելիքի նկատմամբ ապրումը:
- Հույզերի արտացոլումը լեզվական մակարդակում դիտարկելի է բառային և տեքստային դրսևորումներում, որոնց շրջանակներում տարբերակվել են հուզականություն և հուզարտահայտչականություն հասկացությունները: Ընդ որում, հուզարտահայտչականությունը, ի տարբերություն հուզականության զարգանում է անհատի ճանաչողական-հաղորդակցական գործունեության հուզական գործոնի հիման վրա և մտածական արդյունք է:
- Համացանցում հուզարտահայտչական միավորներ պարունակող հաղորդագրություններն աչքի են ընկնում զանազան լեզվական և խոսքային միավորների կիրառմամբ: Բառաձևաբանական մակարդակում մասնավորապես կարևորվել են հուզարտահայտչական ածականները, մակբայները, ձայնարկությունները, գոյականները և բայերը: Հուզարտահայտչական միավորների հազեցվածությամբ աչքի են ընկնում առավելապես ձայնարկություններն ու ածականները: Վերջիններս գոյականի հետ գործածվելիս կարող են ձեռք բերել հավելյալ իմաստային երանգներ՝ կախված համատեքստից և խոսքային իրադրությունից: Շարահյուսական մակարդակում իրենց կարևորությամբ առանձնացվել են կոչականները, հարցական նախադասություններն ու հոետորական հարցերը: Իրենց վառ հուզականությամբ առանձնանում են մասնավորապես հոետորական հարցերը, քանի որ դրանք իրականանում են բազմաբնույթ հաղորդակցական իրադրություններում՝ յուրովի ներգործելով հաղորդակցվողների վրա:

- Համացանցային հաղորդակցությունը տեքստի միջոցով իրականացող հուզական շփումն է, ուստի օգտատերերի խոսքն առավել արտահայտչական դարձնող առողջաբանությանը և դիմաշարժությանը փոխարինում են կետադրական նշանները (բացականչական, տրոհագիծ, գլխատառեր, շեղատառեր և այլն) և գրաֆիկական միջոցները (օրինակ՝ հուզանշաններ), քանի որ, բացի տրոհման գործառնություն կատարելուց, դրանք կարող են ուժգնացնել կամ թուլացնել ասույթի հուզական ներգործման աստիճանը, որի արդյունքում հաղորդակցվողների խոսքն ավելի ազդեցիկ է դառնում: Համացանցային հաղորդակցության առավել բնորոշ հատկություններից է նաև տարատեսակ հապավումների կիրառությունը, որն էլ, օգտատերերին հնարավորություն է ընձեռում ավելի անմիջական և հակիրճ շփվելու միայնակ հետ:
- Փաստական նյութի քննությունը բացահայտում է նաև, որ մարդու խոսքային գործունեությունը պայմանավորված է անհատի յուրօրինակ մտադրություններով և շարժառիթներով, ինչն էլ իր հերթին առավելապես դրսևորվում է հուզարտահայտչական խոսքային ակտերի միջոցով: Հուզարտահայտչական միավորների կիրառմամբ է, որ առավել ցայտուն կերպով արտահայտվում են օգտատերերի հույզերն ու վարքագծային յուրահատկությունները, նրանց վերաբերմունքը շրջապատող աշխարհի և տարաբնույթ իրողությունների նկատմամբ:
- Հույզերի արտահայտման միջոցներն ու կիրառման հաճախականությունը պայմանավորված են նաև տարիքային, ազգամշակութային գործոններով և գենդերային պատկանելությամբ, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ներթափանցելու մշակույթի խորքային իմաստների և ազգային գիտակցության պատկերի մեջ: Ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ, անկախ ազգային պատկանելությունից, համացանցային հաղորդակցության մեջ ներգրավվում են երկու սեռերն էլ: Ընդ որում, առավել հուզականությամբ և հուզական բառապաշարի ավելի հաճախ կիրառմամբ աչքի է ընկնում իգական սեռի ներկայացուցիչների խոսքը, մինչդեռ տղամարդիկ իրենց մեկնաբանություններում ավելի օբյեկտիվ և վճռական են: Սա հաստատվում է նաև լեզվակիր և ոչ լեզվակիր անհատների հուզական շփման առանձնահատկությունները պարզաբանող հարցման արդյունքներով, որն իրականացվել է 50 լեզվակիր և 50 ոչ լեզվակիր արական և իգական սեռի տարբեր տարիքային խմբերի (20-25; 25-30; 35-40; 40+) մասնակիցների հետ տարբեր տեղական և արտասահմանյան կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների շրջանակներում (Երևանի պետական համալսարան, Բրիտանական

դեսպանատուն, Առողջապահական համաշխարհային կազմակերպություն, “Optomed Canada” ակնաբուժական կենտրոն և ամերիկյան այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են Charles R. Drew University of Medicine and Science, Woodberry University, HULT International Business School): Ամփոփելով աշխատանքի ընթացքում կատարված վիճակագրական հարցման արդյունքները՝ պարզվել է, որ լեզվակիր օգտատերերի 20-25 տարիքային խմբի իգական և արական սեռի օգտատերերի միայն 30%-ն է գերադասում համացանցային շփումը, իսկ ոչ լեզվակիր օգտատերի 25-30 տարիքային խմբի՝ 14%-ը: Այլ է դրությունը 40-ից բարձր տարիքային խմբի օգտատերերի պարագայում, որոնք նախընտրում են առերես շփումը, ինչը թույլ է տալիս ևս մեկ անգամ փաստել համացանցային հաղորդակցության համեմատաբար նոր, ոչ լիարժեք հաղթահարված լինելը: Ավելացնենք նաև, որ անկախ ազգային պատկանելությունից՝ օգտատերերը իրականացնում են վիրտուալ շփումը (համաժամ և անհամաժամ տարբերակներով) գրեթե համաչափորեն: Ինչ վերաբերում է հաղորդակցության անկեղծության հարցին, ապա թե՛ լեզվակիր, թե՛ ոչ լեզվակիր արական և իգական սեռի օգտատերերը գտնում են, որ առցանց հաղորդակցության ընթացքում հույզերի արտահայտումը լեզվական և գրաֆիկական տարատեսակ միջոցների օգնությամբ հնարավոր է:

Ընդհանրացնելով նշենք, որ համացանցային հաղորդակցությունը իր յուրօրինակ բնույթով և գործառնություններով ևս մեկ ազդեցիկ միջոց է սեփական հույզերը տարատեսակ ձևերով դրսևորելու համար:

Աշխատանքի հիմնադրություններն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Verbal vs Non-Verbal Means of Expressing Emotions in CMC // Armenian Folia Anglistica, International Journal of English Studies, Yerevan, Lusakn Press, 2013, pp. 111-118.
2. Հուզանիշ բառերի կիրառման առանձնահատկությունները համացանցային հաղորդակցման մեջ // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, N4, Երևան, Լուսակն հրատ., 2012, էջ 69-74:
3. Հուզականության և արտահայտչականության կարգերի իրականացումը համացանցային հաղորդագրություններում // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, N5, Երևան, Լուսակն հրատ., 2013, էջ 17-21:

КИРАКОСЯН ТАТЕВИК АЛЬБЕРТОВНА

ЭМОТИВНЫЕ ЕДИНИЦЫ ИНТЕРНЕТ КОММУНИКАЦИИ
(на материале английского языка)

Диссертация на соискание ученой степени
кандидата филологических наук
По специальности 10.02.07- “Германские языки”

Защита состоится 6 мая 2015 г. в 11. 00 на заседании
специализированного совета 009 – “Иностранные языки” ВАК РА
при Ереванском государственном университете

РЕЗЮМЕ

Сегодня в условиях глобализации все более актуальной становится проблема интернет коммуникации. Данная диссертация посвящена исследованию эмотивно-экспрессивных элементов в интернет-дискурсе. Эмотивность и экспрессивность - языковые категории, воздействующие на развитие языка и способствующие созданию новых средств, служащих для наиболее яркой и насыщенной передачи мыслей и чувств говорящего.

Объектом исследования являются эмотивно-экспрессивные элементы, употребляющиеся в интернет дискурсе, которые анализируются в психологическом, грамматическом и лингвокультурном аспекте.

Цель настоящей диссертационной работы - выявление и изучение лингвистических особенностей эмотивно-экспрессивных элементов в интернет-среде. Для достижения этой цели ставятся и решаются следующие конкретные **задачи**:

- Выявить типы и функции коммуникации, в частности электронной.
- Изучить функции эмоционального мышления и роль эмоций в процессе коммуникации.
- Раскрыть особенности лингвистической актуализации эмотивно-экспрессивных элементов в английском электронном дискурсе.
- Определить роль и значение внеязыковых и в частности, графических средств в онлайн электронном дискурсе.
- Изучить особенности употребления эмотивно-экспрессивных элементов с точки зрения речевых актов в интернет-дискурсе.

- Проанализировать эмотивно-экспрессивные элементы, с учетом лингвокультурных, гендерных и возрастных факторов пользователей.

Актуальность данного исследования заключается в изучении различных эмотивных средств языка, используемых в интернет коммуникации. Анализ эмотивно-экспрессивных слов с учетом вышеупомянутых факторов, а также того, является ли пользователь носителем языка или нет, насколько нам известно, не проводился. В этом аспекте наиболее существенно рассмотреть лингвокультурных и психолингвистических элементов речи виртуальных пользователей. Последнее обуславливает научную **новизну** диссертации, которая состоит в всестороннем исследовании эмотивно-экспрессивных элементов как на разных уровнях языка, так и с точки зрения речевых актов.

Теоретическая значимость диссертационной работы заключается в постановке и решении некоторых задач в психолингвистической, когнитивной, коммуникативной и прагматической сферах с помощью изучения эмотивно-экспрессивных элементов.

Практическая ценность работы обусловлена предложенными подходами исследования интернет-коммуникации и полученными на их основе результатами, применяемыми как в других формах электронных гипертекстов, так и в исследованиях по выявлению особенностей языковой личности и различных языковых аспектов.

Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и интернет-ресурсов, а также приложения.

Во введении представлена тема данной диссертации, ее цели и задача. В этой части работы обосновывается научная новизна и актуальность работы, а также ее теоретическая и практическая значимость.

В первой главе изучаются основы и роль коммуникации в целом и, в частности, электронной коммуникации.

Вторая глава посвящена эмоциям как важным элементам межличностных отношений, а также анализу различных лингвистических способов их выражения в английском языке.

В третьей главе анализируются эмотивно-экспрессивные элементы в онлайн электронном дискурсе с учетом гендерных, возрастных и лингвокультурных факторов.

В заключении диссертации обобщаются результаты исследования.

Tatevik Kirakosyan

EMOTIVE ELEMENTS IN ELECTRONICALLY MEDIATED

COMMUNICATION

SUMMARY

The subject matter of the present research is devoted to the study of the main features of expressing emotions in electronically mediated communication. **The object** of the research is the study of emotional-expressive means used in online electronic discourse. They have been analysed from the psycholinguistic, grammatical and linguocultural perspectives.

The aim of the dissertation is the investigation of linguopragmatic and linguo-cognitive peculiarities of these elements in online communication. To complete the goal of the research the following **objectives** have been put forward:

1. To reveal the main types and functions of communication in general, and online communication, in particular.
2. To uncover the functions of emotional thinking and the role of emotions in the process of communication.
3. To examine all possible linguistic means of expressing emotions in the English electronic discourse.
4. To investigate such types of extralinguistic means of expressing emotions in EMC as graphical images and to discuss their specific uses.
5. To bring out the peculiarities of emotional-expressive elements of EM speech by analysing the speech act theories.
6. To define the nature of the emotional-expressive means of EMC taking into consideration the users' linguocultural, gender and age specific factors.

The novelty of the research is determined by the profound examination of the peculiarities of emotional-expressive elements in various types of online discourse, including chatrooms, discussion boards and some others from the perspective of both various linguistic levels and emotional-expressive speech acts. It's worth mentioning that the discussion of the peculiarities of online electronic language is relevant not only because it is actual, but also for the fact that by means of this

discussion some features of social psychology and individual linguistic consciousness can be revealed.

The theoretical value of the thesis is conditioned by the fact that the obtained results can throw a new light on the investigation of some problems in the field of psycholinguistic and cognitive studies, theories of communication and pragmatics.

The practical significance of the dissertation is established with the approaches that are put forward in the research, as well as with the results that can be applied in various types of electronic hypertext (bulletin-boards, use-nets, etc.) and in the studies clarifying the main linguistic features of different individual speeches.


The paper consists of an introduction, three chapters, a conclusion, the bibliography list and the appendix.

Chapter one presents the study of the role and principles of communication, mainly online electronic communication.

Chapter two is devoted to the study of emotions as important elements of interpersonal interaction as well as to the different linguistic means of their study.

In **chapter three** an attempt is made to illustrate the emotional-expressive elements of online communication by taking into account gender/age specific and some linguocultural factors.

In the **conclusion** the results and the main findings of the research are presented.

A handwritten signature in black ink, appearing to read 'M. Yhruuf', is centered on the page. The signature is written in a cursive, flowing style.